

## 2-րդ ՏԻՊԻ ՇԱՔԱՐԱՅԻՆ ԴԻԱՔԵՏԻ ԴԵՐՈՆ ՀԻՊԵՐՏՈՆԻԿ ՀԻՎԱՆՈՒԹՅԱՄԲ ՊԱՑԻԵՆՏՆԵՐԻ ԱՆՈԹՆԵՐԻ ԵՎ ՍՐՏԻ ՌԵՄՈՂՈՒԼԱՑՄԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՍԵՋ

ՇԱԼԻՄՈՎԱ Ա.Ս.

Խարկովի հետդիպլոմային կրթության բժշկական ակադեմիա, Խարկով, Ուկրաինա

Հանձնված է՝ 02/12/2013 թ., ընդունված է 15/02/2014 թ.

Չուզահեռ ընթացող հիպերտոնիկ հիվանդությունը և 2-րդ տիպի շաքարային դիաբետոս ավելի ազդեցիկ են սիրտ-անոթային հիվանդացության և մահացության կոնտեքստում:

2-րդ տիպի շաքարային դիաբետոսի մետաբոլիկ դետերմինանտները հնարավորություն ունեն թողարկել ամբողջական պաթոֆիզիոլոգիական կասկադ, հանգեցնելով էնդոթելային դիսֆունկցիայի, սրտի և անոթների ռեմոդուլացիայի, իմունոբորբոքային և ապոպտոտ պրոցեսի ակտիվացիայի:

Մեր կողմից անցկացվել է հետազոտություն, որի վերջնական նպատակն է՝ ուսումնասիրել 2-րդ տիպի շաքարային դիաբետոսի դերը հիպերտոնիկ հիվանդությամբ պացիենտների անոթների սրտի ռեմոդուլացման զարգացման մեջ:

Հետազոտվել է 180 պացիենտ. 107 պացիենտ ունեցել է հիպերտոնիկ հիվանդություն՝ զուգահեռ ընթացող 2-րդ տիպի շաքարային դիաբետոսով և 73 պացիենտ՝ հիպերտոնիկ հիվանդություն՝ առանց 2-րդ տիպի շաքարային դիաբետոսի:

Մեր հետազոտության արդյունքները ցույց են տվել, որ հիպերտոնիկ հիվանդությամբ՝ զուգակցված ընթացող 2-րդ տիպի շաքարային դիաբետոսով, պացիենտները բնութագրվում են ձախ փորոքի սիստոլիկ պահպանված ֆունկցիայով և, ի տարբերություն առանց 2-րդ տիպի շաքարային դիաբետոսով հիպերտոնիկ հիվանդների, ավելի արտահայտված ձախ փորոքի կոնցենտրիկ (67,3%) և էքսցենտրիկ (17,8%) հիպերտրոֆիայի գերակշռությամբ, ամենաանբարենպաստ ռեմոդուլացման տարբերակով:

Հիպերտոնիկ հիվանդությամբ, ուղեկցված 2-րդ տիպի շաքարային դիաբետոսով, պացիենտների մոտ ձախ փորոքի դիաստոլիկ դիսֆունկցիան ավելի արտահայտված է, քան առանց 2-րդ տիպի շաքարային դիաբետոսով հիպերտոնիկ հիվանդների մոտ:

Ձախ փորոքի դիաստոլիկ դիսֆունկցիայի խանգարումով՝ առանց շաքարային դիաբետոսի, հիպերտոնիկ հիվանդների 100 % -ի մոտ և 2-րդ տիպի շաքարային դիաբետոսով հիվանդների 13,1 % -ի մոտ արտահայտվել է ավելի ծանր, պսևդոնորմալ, ձախ փորոքի դիաստոլիկ դիսֆունկցիայի տիպ:

Հիպերտոնիկ հիվանդությամբ՝ զուգակցված 2-րդ տիպի շաքարային դիաբետոսով, պացիենտների խմբի առանձնահատուկ տարբերությունը՝ համեմատած առանց 2-րդ տիպի շաքարային հիվանդությամբ խմբի հետ, եղել են ինտիմ-մեդիայի հաստության, քներակում և որովայնային աորտայում զարկերակային ալիքների արագության ավելի բարձր ցուցանիշներ և էնդոթել-կախված անոթալայնացման հավաստի ավելի ցածր թվեր: